ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» փետրվարի 2019 թվականի N 83-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Մարիամ Արամի Երեմյանին տալ երկհարկանի բնակելի տան, օժանդակ շինությունների, ավտոտնակի կառուցման և պարսպապատման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 46-րդ փողոցի թիվ 49 հասցեի տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել Կարեն Լենդրիկի Կյուրեղյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. փետրվարի 20
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» փետրվարի 2019 թվականի N 84-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի ԹԻՎ 58-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով, ***որոշում եմ.***

1. Համայնքի ղեկավարի 2019 թվականի փետրվարի 4-ի «Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման մասին» թիվ 58-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման նախաբանում՝ «Ռաֆայել Միխաիլի Մինասբեկյանի (ծնված՝ 1968 թվականի փետրվարի 2-ին)» բառերից հետո լրացնել «և Իրմա Ռաֆայելի Արմագանովայի (ծնված՝ 1944 թվականի հունվարի 1-ին)» բառերով.

2) որոշման նախաբանի առաջին, երկրորդ և երրորդ պարբերություններում և որոշման առաջին կետում՝ «Ռաֆայել Միխաիլի Մինասբեկյանին» բառերից հետո լրացնել «և Իրմա Ռաֆայելի Արմագանովային» բառերով:

2. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. փետրվարի 20
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» փետրվարի 2019 թվականի N 85-Ա

ՀՈՂԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 102-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ժառանգության իրավունքի վկայագիրը, վավերացված 2011 թվականի նոյեմբերի 28-ին, ***որոշում եմ.***

1. Կոտայքի մարզի Ձորաղբյուր համայնքի ղեկավարի և քաղաքացի Լյովա Վիրաբի Գրիգորյանի միջև 2011 թվականի մայիսի 31-ին կնքված «Հողի վարձակալության պայմանագրում» կատարել հետևյալ փոփոխությունը.

1) պայամանագրի նախաբանում «մյուս կողմից Լյովա Վիրաբի Գրիգորյանի» բառերը փոխարինել «Անահիտ Կորյունի Սեդրակյանի, Սամվել Լյովայի Գրիգորյանի, Արսեն Լյովայի Գրիգորյանի, Գոռ Լյովայի Գրիգորյանի, Գրիգոր Լյովայի Գրիգորյանի» բառերով:

2. Հանձնարարել համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Աշոտի Սանթրոսյանին՝ համայնքապետարանի անունից կնքել հողի վարձակալության պայմանագիր հողօգտագործողների հետ:

3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. փետրվարի 21
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» փետրվարի 2019 թվականի N 86-Ա

ՔԱՆԴՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Գևորգ և Մարատ Սեկոյաններին, Քրիստինե և Սուրեն Ազատյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 42-րդ փողոցի թիվ 37 հասցեի տնամերձ հողամասում թույլատրել քանդելու անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 13082018-07-0007 վկայականում նշված թիվ 1 լողավազանը՝ 33,1 քառ.մետր և թիվ 2 անասնաշենքը՝ 124,6 քառ.մետր մակերեսներով:

2.Քաղաքացի Գևորգ և Մարատ Սեկոյաններին, Քրիստինե և Սուրեն Ազատյաններին տալ մեկ հարկանի բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 42-րդ փողոցի թիվ 37 հասցեի տնամերձ հողամասում:

3.Պարտավորեցնել Գևորգ և Մարատ Սեկոյաններին, Քրիստինե և Սուրեն Ազատյաններին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. փետրվարի 21
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» փետրվարի 2019 թվականի N 87-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Հովհաննես Արմենի Պլուզյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 44-րդ փողոցի թիվ 47 հասցեի տնամերձ հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ մեկ հարկանի բնակելի առանձնատան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. փետրվարի 21
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» փետրվարի 2019 թվականի N 88-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել ստորև նշված անհատ ձեռնարկատերերին 2019 թվականին զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով՝

1) անհատ ձեռնարկատեր Աստղիկ Ռուբենի Սարգսյանին, Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ամառանոցային փողոցի թիվ 34/1 Բ հասցեում,

2) անհատ ձեռնարկատեր Աննա Սմբատի Սահակյանին, Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի թիվ 58 հասցեում:

2. Պարտավորեցնել տնտեսվարող սուբյեկտներին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:

3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. փետրվարի 22
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» փետրվարի 2019 թվականի N 89-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1. «Գուդվին Բետ» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Սարգիս Սեթի Միքայելյան, որպես վիճակախաղերի կազմակերպման օբյեկտ, 2019 թվականի օրացուցային տարվա համար տալ ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 41-րդ փողոցի թիվ 2-4 հասցեում:

2. Պարտավորեցնել «Գուդվին Բետ» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Սարգիս Սեթի Միքայելյան, մուծելու սահմանված տեղական տուրքը:

3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունը հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. փետրվարի 25
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» փետրվարի 2019 թվականի N 90-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 42-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել «ՆԱՏՖՈՒԴ» ՓԲԸ-ին, գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Արամայիս Սամվելի Համբարձումյան, տեղադրելու արտաքին գովազդ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ թաղամասի թիվ 5/34 և 5/35 հասցեի հողամասին հարակից տարածքում:

2. Պարտավորեցնել «ՆԱՏՖՈՒԴ» ՓԲԸ-ի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արամայիս Սամվելի Համբարձումյանին, մուծելու սահմանված տեղական տուրքը:

3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունը հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. փետրվարի 25
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» փետրվարի 2019 թվականի N 91-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Մարգարիտ Վազգենի Ոսկանյանի (ծնված՝ 1964 թվականին ապրիլի 1-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել ճանաչել իր սեփականության իրավունքը Ջրվեժ համայնքի Ջրվեժ Այգեգործական թաղամասի թիվ 56 հասցեի՝ իր կողմից փաստացի օգտագործվող 911,6 քառ.մետր մակերեսով այգեգործական հողակտորի նկատմամբ և օրինականացնել նշված հողակտորում իր կողմից ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ այգեգործի գրքույկ, տրված 1990 թվականի հոկտեմբերի 25-ին, «ՖԻՆԼՈՒՀ» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի հունվարի 24-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ՖԻՆԼՈՒՀ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Մարգարիտ Վազգենի Ոսկանյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ Այգեգործական թաղամասի թիվ 56 հասցեի այգեգործական հողամասում 1992 թվականին ինքնակամ կառուցել է բնակելի տուն՝ 376,8 քառ.մետր, օժանդակ շինություններ՝ ընդհանուր 22,6 քառ.մետր, լողավազան՝ 19,8 քառ.մետր, ավտոտնակ-օժանդակ շինություն՝ 55,9 քառ.մետր, աստիճանավանդակ՝ 0,8 քառ.մետր, հենապատ՝ 3,4 քառ.մետր, պարիսպ՝ 10,76 քառ.մետր և նրա կողմից փաստացի օգտագործվող հողամասի մակերեսը կազմում է 911,6 քառ.մետր՝ փաստաթղթերում ամրագրված 510,0 քառ.մետր մակերեսի փոխարեն:

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1 կետերի պահանջներով և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Մարգարիտ Վազգենի Ոսկանյանին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն ընդգրկված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ, հաշվի առնելով այն, որ Մարգարիտ Վազգենի Ոսկանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ Այգեգործական թաղամասի թիվ 56 հասցեի այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Ճանաչել Մարգարիտ Վազգենի Ոսկանյանի սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքների Ջրվեժ համայնքի Ջրվեժ Այգեգործական թաղամասի թիվ 56 հասցեի՝ փաստացի օգտագործվող 911,6 քառ.մետր մակերեսով այգեգործական հողակտորի նկատմամբ, որն իր կողմից փաստացի օգտագործվել է նաև մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:
2. Հողամասի սահմանները որոշվում են Ջրվեժ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Մարգարիտ Վազգենի Ոսկանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ Այգեգործական թաղամասի թիվ 56 հասցեի այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված շինությունները՝ բնակելի տունը, օժանդակ շինությունները, լողավազանը, ավտոտնակ-օժանդակ շինությունը, աստիճանավանդակը, հենապատը, պարիսպը համարել օրինական:
4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. փետրվարի 26
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» փետրվարի 2019 թվականի N 92-Ա

ՀԱՍՄԻԿ ՎԱՀԱՆԻ ՍԵՐՈԲՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները և Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 2 այգետարածքի 28-րդ տեղամասի թիվ 8 հասցեի բնակիչ Հասմիկ Վահանի Սերոբյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ ընտանիքի 6 անձով բնակվում են կոմունալ հարմարություններից զուրկ այգետնակում, ինքը՝ Հասմիկ Վահանի Սերոբյանը, ծնված 1983 թվականին և ամուսինը՝ Հովհաննես Ստյոպայի Սերոբյանը, ծնված 1977 թվականին, չեն աշխատում, նրանց խնամքի տակ են 4 անչափահաս երեխաները՝ ծնված 2007, 2010, 2014 և 2016 թվականներին, որոնցից ավագ դուստրը՝ Լաուրա Սերոբյանը ունի ողնաշարի լուրջ խնդիրներ, կարիք ունի բազմաթիվ վիրահատությունների և երկարատև բուժման, և ելնելով ընտանիքի սոցիալական վիճակից Հասմիկ Վահանի Սերոբյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ***.

Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Հասմիկ Վահանի Սերոբյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. փետրվարի 26
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» փետրվարի 2019 թվականի N 93-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Անահիտ Մուկուչի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 1-ին փողոցի թիվ 13/1 հասցեի տնամերձ հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ մեկ հարկանի բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. փետրվարի 26
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» փետրվարի 2019 թվականի N 94-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Օթարի Իրակլիի Խումարյանի (ծնված՝ 1954 թվականի մայիսի 15-ին) լիազոր անձ՝ Համեստ Կոլյայի Գրիգորյանի (ծնված՝ 1959 թվականի օգոստոսի 20-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով Օթարի Իրակլիի Խումարյանին պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 19 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր՝ վավերացված 2019 թվականի փետրվարի 21-ին, «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի փետրվարի 25-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Օթարի Իրակլիի Խումարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 19 հասցեի տնամերձ հողակտորում 1965 թվականին ինքնակամ կառուցվել է բնակելի տուն նկուղ՝ 105,81 քառ.մետր, բնակելի տուն 1-ին հարկում՝ 164,19 քառ.մետր, բաց պատշգամբ՝ 2,82 քառ.մետր, կաթսայատուն՝ 4,34 քառ.մետր, մառան՝ 8,61 քառ.մետր և անասնաշենք՝ 18,36 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Օթարի Իրակլիի Խումարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 19 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Օթարի Իրակլիի Խումարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 19 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված բնակելի տուն նկուղը՝ 105,81 քառ.մետր, բնակելի տուն 1-ին հարկում՝ 164,19 քառ.մետր, բաց պատշգամբը՝ 2,82 քառ.մետր, կաթսայատունը՝ 4,34 քառ.մետր, մառանը՝ 8,61 քառ.մետր և անասնաշենքը՝ 18,36 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. փետրվարի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» փետրվարի 2019 թվականի N 95-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Գևորգ Սեյրանի Շահսուվարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 4-րդ թաղամասի թիվ 1/15 հասցեի տնամերձ հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ երկհարկանի բնակելի տան, ավտոտնակի, ամառային խոհանոցի կառուցման և պասրպապատման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. փետրվարի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» փետրվարի 2019 թվականի N 96-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

Արմեն և Գագիկ Հարությունյաններին, Լիլիթ Մովսեսյանին տալ L=160 գծմ, D=32 մմ ջրագծի կառուցման շինարարության թույլտվություն՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժի գյուղի 13-րդ փողոցի թիվ 58/2 հասցեի տնամերձ հողակտորում ջրամատակարարումն ապահովելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. փետրվարի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» փետրվարի 2019 թվականի N 97-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Ալբերտ Ազատի Թոմասյանի ընտանիքի խնդրանքը, ***որոշում եմ.***

Քաղաքացի Ալբերտ Ազատի Թոմասյանի ընտանիքին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 10-րդ փողոցի թիվ 2 հասցեից բաժանված S_1=177,9 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 10-րդ փողոց, թիվ 2/1, S_2=401,1 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 10-րդ փողոց, թիվ 2:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. փետրվարի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» փետրվարի 2019 թվականի N 98-Ա

ՋՐՎԵԺԻ 34-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ջրվեժի համայնքապետարան է դիմել քաղաքացի Մետաքսյա Վահանի Մարգարյանը (ծնված՝ 1982 թվականի հունվարի 21-ին), սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 34-րդ փողոցի թիվ 11 հասցեում գտնվող հողամասի գործառնական նշանակությունը փոխելու բնակավայրի հասարակական կառուցապատման հողակտորից բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 15042016-07-0040, տրված 2016 թվականի ապրիլի 15-ին):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 11-ի թիվ 14-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1. Մետաքսյա Վահանի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 34-րդ փողոցի թիվ 11 հասցեում գտնվող 734,0 քառ.մետր մակերեսով բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոխել բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորի:

2. Աշխատակազմի առաջատար մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝ սույն որոշման առաջին կետում նշված հողի գործառնական նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

3. Պարտավորեցնել Մետաքսյա Վահանի Մարգարյանը՝ որոշումից բխող իրավունքները գրանցել անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. փետրվարի 27
գ. Ջրվեժ